Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2775

Директору
библиотеки
над просмотре

206
Д-45

29

ԴԱՐԱՁԱԴԷ

Ա.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ՏԻՐԱՑՈՒՆ

(Մի թռուցիկ տեսութիւն նրա բարոյական և նիւթական վիճակի մասին)

«Ոչ ի կարծ ընդոստուցեալ և ոչ ի լուր զարթուցեալ, այլ ես ինքնին անձամբ անդէն ի տեղւոջն պատահեցի և տեսի և լուայ....»

Եղիշէ.

ԹԻՖԼԻՍ 1905

Էլեկտրատպարան „ՀԵՐՄԷՍ“ Ընկ. Մադար. փող., 15

(101)

206
L-45
128

23 SEP 2009

206
Հ-45
ա գ.

ԴԱՐԱՁԱԴԷ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ

ՀԱՅ ՏԻՐԱՑՈՒՆ

(Մի տեսութիւն նրա բարոյական և նիւթական վիճակի մասին)

библ. Паргев Базяна
Купл. — 1930 г
Отд. 29 № ~~486~~ 631

ԹԻՖԼԻՍ 1905
Էլեկտրատպարան տպարան „ՀԵՐՄԷՍ“ ՀՆԿ. Մաղաք. փող., 15.
(101)

19.06.2013

2775

Дозволено цензурою. Тифлисъ, 18 Мая 1905 г.

ՀՄ 8148

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ՏԻՐԱՑՈՒՆ

I.

*Մօտ ժամանակներս լրագիրները հաղորդեցին այն ընդհանուր խնդրագրի մասին, որ Մոսկուայի համարեա բոլոր ուղղափառ գլխաւոր եկեղեցիների ստորին պաշտօնեաները *) ներկայացրել են սրբազան Սինոդին։ Խնդրագիրը բաղկացած է երեք գլխաւոր կէտերից և ունի մօտ երեք հարիւր ստորագրութիւն։*

*] Псаломщикъ—*սաղմոսասաց, փոխասաց.*

Առաջին կէտի մէջ նրանք պահանջում են, որ բոլոր եկեղեցական արդիւնքները բաժանուեն եկեղեցու պաշտօնեաների մէջ այնպէս՝ որ փոխասացներին—նլանց թուի համեմատ—տրուի մէկ մէկ, սարկաւագին՝ երկու և քահանային՝ երեք մաս, հակառակ ներկայ չորս մասի։ Այսպէս ուրեմն, նրանց պահանջի համաձայն, արդիւնքը պիտի բաժանուի եօթ մասի, փոխասացների թիւը ընդունելով երկու հոգի։ Մասնատրութեան այս եղանակը աւելի շօշափելի դարձնելու համար վերցնենք մի օրինակ։—Դիցուք որ և է մէկ օրինակատարութիւնից ստացուել է 28 ր.։ Բաժանելով այդ գումարը եօթը հաւասար մասերի, կ'ստանանք չորս։—Այստեղից պարզ է, որ իւրաքանչիւր մի փոխասաց կամ, աւելի լաւ ասած, դպիր այդ դէպքում ստանում է 4 ր., սարկաւագը՝ 8 ր. և քահանան 12 ր. այլ խօսքով՝ դպիրը ստանում է քահանայի ստացածի $^1/_3$ մասը։

Երկրորդ կէտի մէջ պահանջում են, որ դպիրների շաբաթական հերթակալութիւնն ամլինի եկեղեցիներում (երբ նրանց—դպրի—թիւը երկու կամ աւելի է), ինչպէս որ այդ գոյութիւն ունի նաև քահանաների մէջ, բացատրելով, որ իրենց աշխատանքը, իբրև

պաշտօնեայ, ոչ միայն թեթև, այլ և աւելի ծանր է, քան այդ վերջիններինը։

Երրորդ կէտի մէջ դպիրները բողոքում են այն անքաղաքավարի և մինչև իսկ ուղղակի կոպիտ վարմունքի դէմ, որ քահանաներից շատերը թոյլ են տալիս ցոյց տալու նրանց վերաբերմամբ։

Մի թռուցիկ հայեացք ձգելով մեր եկեղեցական ստորին սպասաւորների դրութեան վրայ այն երեք կէտերի նկատմամբ, որ իրենց խնդրագրի մէջ առաջ են բերում Մոսկուայի դպիրները, դեռ մի խորին նախանձով միայն կարող է վերաբերուել դէպի նրանց ներկայ տնտեսական ու բարոյական կացութիւնը հայ տիրացուն, ուր մնաց՝ թէ նորա համար մի հեռաւոր և միանգամայն անիրագործելի երազ չ'թուայ կեանքի այն բարենորոգութիւնը, որ նրանք են պահանջում այժմ։ Խնդիրը զուտ դասակարգային բնաւորութիւն ունի և բողոքը շօշափում է գլխաւորապէս նորա տնտեսական կողմերը։

Մի կողմը թողնելով այն հանգամանքը, թէ հայ եկեղեցու ստորին պաշտօնեաները որքան պատրաստականութիւն ունեն այդպիսի կոլեկտիւ ձևով պահանջներ դնել մեր հոգևոր բարձրագոյն իշխանութեան

(Հ) անհերքելի: ոչ միայն թեթև
այլ [illegible]
[illegible]

առաջ իրենց վիճակի բարւոքման համար և թէ որքան գիտակցաբար կարող են նրանք վերաբերուել դէպի այդ լուրջ խնդիրը,—աւելորդ չի լինի գոնէ մի ամփոփ տեղեկութիւն տալ այն նիւթական ու բարոյական աշխարհի մասին, որի մէջ գտնվում է հայ եկեղեցու ժամանակակից ստորին պաշտօնեան, գործածական լեզուով՝ տիրացուն—հայ ժողովրդից արհամարհուած այդ դասակարգի ողորմելի ներկայացուցիչը։ Եւ ինչո՞ւ է արդեօք նա արհամարհուած։—Եթէ ի նկատի առնելու լինենք նրա անմիջական իշխանաւորի—քահանայի—վարկ ու յարգանքի, հեղինակութեան այն չափը, որ ներկայումս նա վայելում է հասարակութեան մէջ *), մեզ համար միանգամայն հասկանալի կ'լինի այդ արհամարհանքի բուն պատճառներից մէկը։ Բայց ախտահանիր, մաքրիր այդ երկու դասակարգերն էլ անպէտք ու վնասակար որոմներից՝ և իրերը իրենց բնական դրութիւնը կ'ստանան, կ'մտնեն իրենց բնական ընթացքի մէջ, մի հանդամանք՝ որ երբեմն երբեմն գիսաւոր աստղի նման, սուր պահանջի ձևով երևան է գալիս մեր հասարակա-

*) Մեր խօսքը հազուագիւտ բացառութիւնների մասին չէ։

կան կեանքի մտաւոր հորիզոնում և արագօրէն կրկին անհետ կորչում, անցնում...

Արդիւնաբաշխութեան որոշ կարգ ու կանոնի կատարեալ բացակայութիւն է թագաւորում մեր եկեղեցու մէջ։ Չ'կայ մի որոշ կէտ, որտեղ սահմանափակուի քահանայի, սարկաւագի և դպրի ստանալիք հասոյթները եկեղեցական այս կամ այն օրինակատարութիւնից։ Դժուար չէ ուրեմն երևակայել, թէ որքան արդար ու բարեխիղճ կարող է լինել մանաւորութիւնը, երբ նա կատարվում է կամայական ձևով, երբ նա ամբողջապէս թողնուում է քահանայի իրաւունքին, նրա բարեհայեցողութեանն ու խղճին (եթէ միայն նա ունի)։ Այնտեղ, ուր կայ օրէնք, ուր կայ մանաւանդ նրա բառացի գործադրութիւնը՝ բնականաբար զսպւում ու կաշկանդվում է մարդկային կամայականութիւնը. չ'կայ օրէնք, չ'կայ մանաւանդ նրա գործադրութիւնը՝ խեղդւում է ամեն մի արդարութիւն, խեղդւում ամեն մի իրաւացի բողոք։ Եւ ահա մի կողմից այդ օրէնքի բացակայութիւնը, միւս կողմից քահանայական դասի ճնշող մեծամասնութեան անպատմելի չահամոլութիւնն ու անօրինակ անխղճութիւնը եկեղեցու ստորին

պաշտօնեաների համար ստեղծել է մի դրութիւն, որտեղ շահագործուողը, կողոպտուողը հարստահարուելով հանդերձ՝ չ՛ունի մի յենակէտ, որին ապաւինելով, կարողանայ պաշտպանել իւր իրաւունքը, բողոքել իւր զրկողի, իւր թալանողի դէմ։

Շատերը դուցէ հոգևոր կառավարութեան դռները մեզ ցոյց տան այդ դէպքում։ Այդպիսիներին մենք կարող ենք հաւատացրած լինել, որ նախ դժուար կարելի է երաշխաւորել գործի յաջող ելքի համար և երկրորդ՝ համոզուած լինել, որ նման գործով այդ դռների շեմքից անցնողի համար միանգամ ընդ միշտ փակուած կ՛մնայ եկեղեցիների մուտքը, այլ խօսքով՝ արդարութիւն խնդրելու համար անօգնական փողոց շպրտուած։

Սակայն միակողմանի չ՛լինելու համար նայենք այժմ շքադրամի և միւս երեսը։ — Քանի՞ հոգի անհատներ արդեօք կարելի է հաշուել դիցուք Տփխիսի եկեղեցական սպասաւորների ամբողջ կազմի մէջ, որոնք իրենց անընդհատ ու յարատև զրկանքի համար երբ և իցէ պաշտօնապէս բողոքած լինեն և այժմ էլ բողոքելու քաջութիւն ունենան, և միւս կողմից կեանքի և ապրուստի այնքան

ապահովութիւն, որ անտարբեր կարողանան նայել եկեղեցուց անպայման կերպով արտաքսուելու անխուսափելի հետևանքի վրայ։ Զափազանցութիւն չի լինի, եթէ մենք սահմանափակուելու լինենք 2%-ով։ Այստեղից պարզ է արդէն, թէ տնտեսական որպիսի անկեալ պայմանների մէջ է գտնվում հայ եկեղեցու ստորին պաշտօնեան և թէ որքան աղքատ է նա պատուասիրութեան հասկացողութեան նկատմամբ։ Տարիների ընթացքում նա անողորմ կերպով կողոպտվում, հարստահարվում է իւր անմիջական իշխանաւորից և դրաստային համբերութեամբ անձայն ու անշշուկ տանում է իւր անլուր զրկանքները։

Սակայն այդ ստրկական դրութեան դէմ բողոքելու պայմանների աննպաստ դասաւորութիւնը խոստովանուելով հանդերձ՝ անկարելի է մոռացութեան տալ և չ՛յիշել մի այլ գլխաւոր հանգամանք, որ այդ դասակարգի քարացած ու անզգայ կեանքի բուն պատճառն է եղել միշտ և այժմ էլ է։—Դա այն անսահման ու անծայր տգիտութիւնն է, մաքի այն կուրութիւնը, որի մէջ խարխափում է նա՝ մարդկային ազատ զգացմունքի այն դիակնացած կաշկանդուն վիճակը, որ,

կարծես, ճակատագրական մի անխուսափելի զօրութեամբ միշտ անասնային հակումներ և հնազանդութիւն է ներշնչում նրան. ժողովրդի լեզուի մէջ քաղաքացիական լայն իրաւունք ստացած մաքուր «տիրացուական» տգիտութիւնը։ Ճիշտ է, Տփխիսի մօտաւորապէս 60 հոգի սպասաւորների 20%-ը ընթացաւարտ երիտասարդներ են,—գլխաւորապէս թեմական դպրանոցներից,—սակայն անկարելի է ներկայ ինդրում նրանց մասին նպաստաւոր կարծիք յայտնել և միշտ չ՛յիշել, երբ խօսքը նրանց է վերաբերում, Ֆռիլովի հռչակաւոր квартетъ-ից «...какъ ни садитесь, все въ музыканты не годитесь» տողերը։ Որքան և ցաւալի է այս հանգամանքը, նոյնքան և մի դառն ճշմարտութիւն է։ Այլապէս դժուար է բացատրել, թէ ինչպէս միջնակարգ կրթութեան տէր այդ անհատները հաւասարապէս ու կատարեալ ներդաշնակութեամբ լուռ ու մունջ միևնոյն զրկանքն են կրում Ախալքալաքի և կամ Ղազախի խորքերից Տփխիս «տիրացութեան եկած» դրի սեն ու սպիտակը հագիւ հաղ ճանաչող իրենց համապաշտօնեաների հետ... Եւ մի թէ ուսումը, գիտութիւնը մարդկային արժանապատուութիւնը յարգելու

համար այդ չափ զգացմունք են միայն ներշնչել այդ պարոններին։ Եկեղեցու իւրաքանչիւր մի սպասաւոր միշտ առիթ ունի լսելու երկնաւոր փրկչի այն խօսքերը՝ թէ «որին շատ է տրուած, նրանից էլ շատ պահանջվում է»...

Անհետաքրքիր չի լինի այստեղ պարզել մի կարևոր հարց.—թէ ինչո՞ւ մեր եկեղեցական ստորին պաշտօնեաների մէջ բացակայում է կրթուած տարրը։ Չէ՞ որ մեր թեմական դպրանոցները, Էջմիածնի ճեմարանը ամեն տարի բաւական թուով ընթացաւարտներ են տալիս։ Մինչև ծխական-եկեղեցական ուսումնարանների երկրորդ անդամ, այն է 1896 թ., փակուելը, հասկանալի է, թէ ուր պիտի, բնականաբար, դիմէր այդ դպրոցաւարտների հոսանքը։ Գաւառական կեանքը վերջին տարիների իւր վերածնութեամբ այդ երիտասարդ ուժերին էր պարտական, որոնք ցրուելով նրա այս կամ այն խուլ ու հեռաւոր անկիւնները, թէև կտրուած քաղաքային վայելչութիւններից, զրկուած ամեն մի յարմարութիւնից, կենսական անհրաժեշտութիւններից, այնու ամենայնիւ մի պաշտելի ինքնուրացութեամբ կեանք ու վերակենդանութիւն էին տալիս

գիւղական մոռացուած ժողովրդի մութ ու մեռած աշխարհին։ Որպէս համատարած խաւարի մէջ առկայծող կենդանի շողեր, սունկի պէս այստեղ-այնտեղ ուսումնարաններ էին շարունակ ծլում, աճում։ Կեանք կար... իդէալ կար... Բայց այդ միևնոյն երիտասարդութիւնը միշտ հեռու մնաց մայրենի եկեղեցու հետ իւր կեանքը կապելուց։ Գիւղական աշխարհի վերաբերմամբ նրա բռնած այդ դիրքը շատ հասկանալի էր։—Այլ բաներ գործել ուսուցչական ասպարիզում և՛ ուրեմն, այդ կեանքի ժամանակամիջոցի իրաւունքը ունենալ սեպհական տրամադրութեան տակ և բոլորովինայլ բան՝ հոգևոր կոչումով պրսակուել ընդ միշտ այս կամ այն գիւղի վերայ և այնտեղ էլ ստիպուած լինել մնալ, որքան էլ թէ նիւթական և թէ բարոյական պայմանները խղճալի լինէին։ Տարագնաց կեանքը շատ դրաւիչ կողմեր է ունենում։ Միւս կողմից դեռ մեր մէջ կուլտուրայի երակը այնչափ ուժգին զարկ չունէր, որպէս զի մենք գիւղերի համար «գաղափարական քահանայի» տիպեր կարողանայինք վերարտադրել։

Նոյն ցաւալի երևոյթը սակայն տեղի էր ունենում նաև քաղաքներում և մեր երի-

տասարդ ինտելիգենտ ուժերը, մինչդեռ ուսումնարանները փակուելուց յետոյ գլխապատառ ցրւում էին մի կողմից դէպի նաւթային աշխարհը, Կովկասի զանազան կենդրոնները և միւս կողմից մի ահագին տոկոսն էլ փրկութիւն էր որոնում հաշուապահական կուրսերում՝ Երևանում, Սևանայ Վանքում, Շուշիում... տգէտների ահագին վոմհակներ էին ձևռնադրվում թշուառ ժողովրդի ցաւերը բազմապատկելու համար... Սա մի դառն ու ցաւալի իրականութիւն էր, որ այժմ էլ պահպանում է իւր չարաբաստիկ գոյութիւնը և, երևի, այդպէս էլ կը-շարունակուի, չնայած մեր հոգևոր բարձրագոյն իշխանութեան փքուն շրջաբերականներին՝ անուս տգէտների առաջ քահանայական ասպարէզը փակելու համար։ Կաշառքը ընդհանուր մարդկութեան հետ պիտի գերեզման իջնէ և նրա ամենակարող զօրութիւնը ամբողջ աշխարհի հետ միասին կործանուի։...

Սակայն շատ չ՛հեռանանք մեր հարցից։—

Եկեղեցական սպասաւորի պաշտօնի մէջ մտնողը,—լինի նա տգէտ, թէ կրթուած, այդ միևնոյն է,—միշտ դպիր և կամ սարկաւագ մնալու պայմանով չէ ընդունում այդ ծառա-

յութիւնը, հապա անշուշտ քահանայանալու մտադրութեամբ, և ցաւը նրա մէջն է, որ որ այդ նոյնքան իրաւունք է համարում իրան որև է մի համալսարանաւարտ և կամ դպրոցաւարտ, որքան և խալիփայական ուսումնարանի բովից դուրս եկած սաղմոսն ու շարականը անգիր սերտած և կամ որև է դպրոցի կողքից անցած մի տիրացու, որ աշխարհի կարգ ու սարքի հասկացողութեամբ ամեն ինչ հացի խնդրով միայն դատելու սահմանից այն կողմը երբէք չի անցնում և անընդունակ է նոյն իսկ անցնելու։ Այժմ տեսնենք, թէ այս երկու հակադիր ծայրերը, երբ փորձում են ոտ դնել նուիրական պաշտօնի առաջին աստիճանի վրայ, որպիսի խոչ ու խութի են հանդիպում։ Եթէ դուք մի դարբնից, որ միայն իւր մուրճն ու երկաթն է ճանաչում, հարցնելու լինէք՝ թէ որպիսի սպասաւոր կըցանկանայ իւր եկեղեցու համար՝ կրթուած, ուսում ստացած, թէ ոչ,— նա, այդ դարբինը, առանց երկար ու բարակ մտածելու, անկասկած, առաւելութիւնը կ՚տայ կրթուածին, և այդ այն հասարակ պատճառով, որ դարերի տրադիցիան նրան սովորեցրել է յանձին իւր եկեղեցու պաշտօնեաների միշտ երևակայել կրթուած անհատների, թէև, պարզ է, դրան հակասող ժամանակակից դրութեան մասին նա գաղափար ունենալ չի կարող։

Սխալ է միանգամայն այն հայեացքը, թէ մեր գիւղական ժողովրդի ծայրահեղ տգիտութիւնն է պատճառը, որ զանազան բախտախնդիր անկիրթ տիրացուներ յաջողութիւն են գտնում քահանայ ձեռնադրուելու այս կամ այն գիւղի վրայ։ Ուսման անհերքելի կարևորութիւնն այսօր ամեն մի դռեհիկ գիւղացին պատրաստ է խոստովանելու և նա երբէք չի համաձայնի այդպիսիներին իւր հաճութիւնը տալու, եթէ չ՚լինեն մի շարք արտաքին ճնշող պայմաններ։ Ամենաղօր կաշառքը ամփոփելով իւր բռան մէջ գիւղի հարուստներին, ազդեցիկներին՝ դրանց հզօր ազդեցութեամբ իւր ցանկացած տօնն է տալիս գիւղական հասարակութեանը և այդպիսով յաջողութեամբ ի կատար ածելով իւր միսսիայի նախապատրաստական անհրաժեշտ քայլը, համարձակ կերպով այնուհետև անցնում է հարկաւոր ինստանցիան և այնտեղ էլ իւր թովիչ զօրութեամբ, նոյն բախտաւոր ատղի տակ միևնոյն յաջողութիւնը գտնելով հարթում է իւր կլիէնտի ճանապարհը «առ ի հովուել զժողովուրդն»...

(beton)

Այլ բանէ սակայն քաղաք տեղերում։—

Այդտեղ արդէն ինտելիգենտ անձնաւորութիւնը ոչ թէ միայն քահանայ ձեռնադրուելու դէպքումն է հարկադրուած լինում մաքառել բազմաթիւ խոչնդոտների դէմ, այլ նոյն իսկ այն դէպքում, երբ նա, ինչպէս ասացինք, այդ սրբազանագործ պաշտօնի առաջին աստիճանին է ցանկանում մօտենալ։ Քահանան, որին՝ հաստատ գիտէք՝ տիրացու է հարկաւոր, երբ դիմում էք այդ ազատ տեղի համար, սրբազան պարտականութիւն է համարում սկզբից և եթ հարցնել. «Որտեղ ես սովորել, աւարտածես». և միշտ դէմքը թթուացնում, դժգոհութեան մի տըհաճ արտայայտութիւն է տալիս նրան, երբ իմանում է, որ դուք, այո, աւարտել էք այս կամ այն թեմական դպրանոցում և կամ դիցուք Գէորգեան ճեմարանում։ Որչափ և տարօրինակ է գռեհիկ դարբնի և ժողովրդի հոգևոր հովուի տրամադրութեան և աշխարհայեացքի մէջ եղած այս ակներև հակասութիւնը, նոյնչափ և դա մի մերկ ճշմարտութիւն է, մի ցաւալի իրականութիւն։ Սակայն խնդիրը դրանով դեռ բոլորովին չի վերջանում։—Ձեզնից անպատճառ պահանջում են, որ դուք հիմնաւորապէս ծանօթ լինէք եկե-

ղեցական երգեցողութեանը, ժամասացութեանը, օրինակաւորութիւնների կարգ ու կանոնին. պահանջում են նոյնպէս, որ լաւ և քաղցր ձայն էլ ունենաք... Եղէք դուք մի կատարեալ ագէտ, բայց սովորած շարականների ուղիը եղանակները, ունեցէք փոքր ի շատէ յաջող ձայն՝ և ազատ տեղը անշուշտ ձեզ կ'տրուի։ Իսկ եթէ պատահի, որ դուք աւարտման վկայագիր ունենալով հանդերձ, կարող էք բաւականութիւն տալ և միւս պահանջներին, և միևնոյն ժամանակ նոյն տեղի համար քահանային դիմում է ձեզ հետ նաև կրթութիւնից իսպառ զուրկ մէկը՝ կարող էք հաւատացած լինել, որ առաւելութիւնը կ'տրուի ոչ թէ ձեզ, այլ միւսին։ Իսկ աւելի խելացի վարուած կ'լինէք, եթէ նման դէպքում հեռու պահէք ձեզ մրցութեան մէջ մտնելուց. մրցութիւն եմ ասում, որովհետև ձեր աչքին թող փչելու համար ձեզ և ձեր ախոյեանին եկեղեցու հակառակ դասերում կանգնեցնելով, անշուշտ կ'փորձեն, թէ ձեզնից որն է ընդունակ աւելի բաձրաձայն գոռալու և փոխերը «վարժ ու ջրի պէս կարդալու»....

Ձեր ուսման, կրթութեան նշանակութիւնը, դուք տեսնում էք, այդտեղ կորչում

ZUUG ԱԿՄ.ՍՍՀ

է և յաղթանակը մնում է ոգէտի կողմը։ Բայց եթէ ուշադրութեամբ նայելու լինէք ձեր չորս կողմը, այդ միևնոյն եկեղեցական հայրերի աչքի ընկնող մեծամասնութիւնը ոչ միայն զուրկ է դեղեցիկ ձայնից, երգելու ընդունակութիւնից, այլ և նրանցից շատերն իսկ չեն կարողանում ուղիղ կարդալ աւետարանի բառերը, Աստուածաշնչի անծանօթ տեղերը, ուր մնաց, թէ նրանց հինգ տող գրուածքի մէջ առնուազն մի ամբողջ տասնեակ ուղղագրական սխալներ կարելի է գտնել և գրաբար գրութեան մէջ հայկաբանութեան այնպիսի գոհարներ, ինչպէս օրինակ «վասն որոյ և տուաւ նմա զայս վըկայական» և կամ «քուֆթային, զոր առաքեցեր, կերաւ և գներսէս քահանայն»...

Պահանջում են ձեզնից այն, ինչից որ միանգամայն զուրկ են իրենք։ Իսկ թէ ինչու իրենց նախորդները նոյն պաշտօնով եկեղեցու մէջ նրանց ընդունելու ժամանակ այդքան ըծախնդիր չեն եղել, այդ արդէն իրենց գաղտնիքն է... Պարզն այն է միայն, որ ներկայումս այդ օրէնք է ճանաչվում նրանց կողմից... Միայն մի ճշմարիտ կողմ կայ այդ պահանջների մէջ՝ ձայնի յաջողակութիւնը։ Այո, մեզնից իւրաքանչիւրն էլ կարող է խոստովանել, որ եկեղեցական պաշտօնէին իսկապէս որ հարկաւոր է ձայնեղ լինել։ Սակայն որքան իրաւացի և նպատակայարմար է հոգևոր կոչման ձգտող իւրաքանչիւր մէկից անպատճառ պահանջել, որ նա յաջողակ ձայն ունենայ և այդ պայմանն էլ միևնոյն ժամանակ շրջափակել օ էնքի տահմանների մէջ, մոռանալ կրթութեան ցենզը և միայն նշանակութիւն տալ ձայնին և շարականների եղանակների հետ ունեցած ծանօթութեանը—աբսուրդ չէ՞ միթէ այդ։ Սա մէկն է այն գլխաւոր արգելքներից, որ ցանկացող դպրոցաւորի առաջ փակում է եկեղեցական ծառայութեան մուտքը։

II

Այժմ մի բոպէ երևակայեցէք, որ դուք, այնու ամենայնիւ, յաջողութեամբ անցնելով Սցիլլան և Քարիբդան՝ ի վերջոյ ընդունուել էք դիցուք Տփխիսի եկեղեցիներից մէկում իբրև սպասաւոր-դպիր։ Մտնելով այդ պաշտօնի մէջ և միաժամանակ մնալուց յետոյ ծանօթանալով ձեզ շրջապատող կեանքի մանրամասնութիւնների հետ, ձեր աչքի առջև բացվում է մի աշխարհ, որտեղ ամենից ա-

ռաջ բացակայում է և՛ խիղճը, և՛ արդարութիւնը, որտեղ աստուածպաշտութեան մաքուր և անարատ գաղափարի փոխարէն թագաւորում է մամոնապաշտութիւնը և մարդիկ ամենագծուծ հաշիւների ետևից ընկած՝ պատրաստ են ամեն քայլափոխում մոռանալ և՛ պատուի, և՛ ամօթի ու պատկառանքի զգացումունքը։ Քսութիւնն ու շողոքորթութիւնը իրենց կատարեալ դերի մէջ են այդտեղ. զուր է ազնուութիւն և բարոյական մաքրութիւն որոնել այդպիսի մի միջավայրում։ Հորիզոնը սակայն սկսում է աւելի և աւելի լայնանալ... և ձեր աչքի առաջ այնպիսի խարդախութիւններ և աչքակապութիւններ են կատարվում, որոնց վրայ ամենայաջողակ ձեռնածուն անգամ կարող է նախանձից տրաքուել։ Երջապատող մթնոլորդը ճնշում է ձեզ և դուք դժուարանում էք շընչել... Մի թէ,—մտածում էք,—այս մարդիկը, որ երկնաւոր փրկչի աշակերտներն են կոչուած լինելու, որ ժողովրդի հոգևոր կեանքի առաջնորդներ են ընտրուած,—իրենց բարոյականի այդօրինակ աղքատութեամբ ընդունակ են կատարելու իրենց վրայ ընդունած վեհ պաշտօնի, կոչման ծանր ու լուրջ պատասխանատուութիւնը։ Թախծալի

մտքեր են պաշարում ձեզ և դուք ակամայից յիշում էք մեծ վարդապետի յուսահատական և ցասմնալի խօսքերը, թէ՝ «տուն իմ տուն աղօթից կոչեսցի և դուք արարիք զնա այրս աւազակաց»... Եւ ո՞վ է արդեօք մեղաւորը, որի՞ օձիքից արդեօք հարկաւոր է բռնել և հաշիւ պահանջել՝ ժողովրդի՞, թէ հոգևոր իշխանութեան։ Մեղաւորէ թէ մէկը և թէ միւսը։ Մեղաւոր է մասնաւորապէս քաղաքացի ժողովուրդը, որ կուլտուրապէս անհամեմատ աւելի բարձր լինելով գիւղական ռամիկ ժողովրդից՝ անհամեմատ էլ խիստ պիտի վերաբերուի դէպի ընտրողական գործը, աչքի առաջ ունենալով, որ գիտակցաբար կատարուած ընտրութիւնը միայն կարող է ցանկալի հետևանք տալ։ Մեղաւոր է և հոգևոր բարձրագոյն իշխանութիւնը, որ չ՝հասկանալով հանդերձ, թէ որպիսի բովի ծնունդ են լինում առհասարակ գիւղական քահանայացուներին տրուած համախօսական վճիռները և, հաւանօրէն, հասկանալով, թէ որպիսի գոյն են կրում թեմական հոգևոր ատեաններում տրուած նրանց «յաջող քննութիւնը», անդրադէտների և թերուս համբակների ամբողջ լեգիոնների ձեռնադրութեան հրամաններ է

այնուամենայնիւ ուղարկում կոնսիստորիա-
ներին և այդպիսով գաւառներում ստեղ-
ծում հոգևոր մարմնի մի այնպիսի կազմ,
որ նոյնքան մութ ու խաւար է, որքան և
բուն ժողովրդի մտաւոր բարոյական աշխարհը։

Շարունակում էք դուք ձեր ծառայու-
թիւնը եկեղեցում և հետզհետէ աւելի և
աւելի են ընդարձակվում կեղտոտ իրակա-
նութեան սահմանները։ Կենդանի փաստերը
ալեկոծում են ձեր ներքին աշխարհը և միւս
կողմից էլ դուք ձեր կաշուի վրայ զգում էք
մի սուր այրոց։— Դա ձեր անմիջական ի-
խանաւորի ակներև հարստահարութեան,
բիրտ ու կոպիտ վարմունքի, փաշայական
բռնակալ վերաբերմունքի, բարձրահայեաց
և ինքնահաւան քամահրանքի անխուսափելի
հետևանքն է։ Ձեր քահանան ոչ մի դէպքում
չի յարգի ձեր մարդկային արժանաւորու-
թիւնը և, որ գլխաւորն է, նա, կարծես դիտ-
մամբ, այդ արժանապատուութիւնը աւելի
խորը խոցելու, վիրաւորելու համար կ'ընտրէ
անպատճառ մի այնպիսի միջոց, երբ ձեր
շուրջը լի է կողմնակի անձնաւորութիւններով։
Այն ինչ, երբ դուք մենակ էք, նա հազիւ
թէ վճռի անցնել մարդավարութեան սահ-
մանից և անպատճառ կ'սկսէ բամբասել իւր

պաշտօնակից ընկերներից մէկի կամ միւսի
վերայ՝ շատ անդամ չ'եղած թերութիւններ
փաթաթելով նոցա գլխին։ Խօսակցութեան
այլ նիւթ նման դէպքերում առհասարակ
նրանք անկարող են դտնելու....

Ձեր ծխերի մէջ ննջեցեալ է պատահել։
Ամբիծքների ժամանակ և մանաւանդ թաղ-
ման օրը դուք մի կատաղեալ սկիւռ պիտի
լինէք՝ կենդանի և աշխոյժ, կամ, ինչպէս ա-
սում են, ձեր ոտի վրայ ոտ պիտի ունենաք,
աչքի վրայ՝ աչք։ Չ'լինի թէ ժողովրդին բա-
ժանուած կիսայրեալ մոմերը կրկին յետ
չ'ժողովէք և խնամքով չ'փաթաթէք՝ հէնց նոյն
ե՛ւ եկոյեան և եթէ տէր հօր տունն ուղարկե-
լու.... Պիտի ուշի ուշով նայէք, որ աւելորդ
մոմ ոչ ոք չ'վերցնի, այլապէս դուք պատաս-
խանատու կլինէք կորածների համար։ Չ'վի-
տի մոռանաք, որ աշտանակների մեծ մոմե-
րը (կերոնները) շուտ չ'պիտի վառել և ամ-
բիծքը վերջանալուց յետոյ հարկաւոր է խա-
կոյն և եթէ փչել-հանգցնել, որ շատ չ'այ-
րուեն.... Չէ՞ որ դրանք բոլորը քո տէր տէ-
րինն են և դու պարտաւոր ես հսկել դրանց
վրայ, հսկել փոխանակ երկուսի չորս աչքե-
րով.... Բան է, եթէ մեռելատէրը պահան-
ջէ ամբիծքը սկսուելուց կէս կամ մէկ ժամ

առաջ վառել այդ մոմերը, դուք պիտի այն-
քան հնարագիտութիւն գործ դնէք, այնքան
այս ու այն կողմը «մուլի-շուլի» անէք, որ
մոմերը չ՛վառելով հանդերձ՝ թէ նա չ՛վիրա-
ւորուի և թէ քո տէրտերի տրամադրութիւնը
չ՛խանգարուի, և այդպիսով մոմերը վառուին
և հանգչուին ուղիղ ձեզ թելադրուած ժա-
մանակին.... Շատ անգամ մեռելատէրը, գու-
ցէ և անցեալի օրինակներից խրատուած,
կասկածում է մոմերը յանձնել ձեզ, մի գու-
ցէ գողանաք *): Եւ ահա դիցուք հրաւիր-
ուած քահանաներից մէկը ուշ է եկել, մոմ
չ՛ունի ձեռին: Դուք այդ ժամանակ ստիպ-
ուած էք լինում մարդկանց բազմութիւնը
ճեղքելով այս ու այն կողմն ընկնել, շատ ան-
գամ նոյն իսկ խոհանոցը մտնել՝ գտնելու
այն Ծղալօբին կամ Քեթևանին, որին պահ
են տուած մոմերը.... Իսկ այնտեղ կարգը
կատարում են և ձեր որոշ պաշտօնը վարող
չ՛կայ: «Ո՞ւր ես կորել, այ տղայ, ինչու մո-
մը ժամանակին չես վերցնում».... բարձրա-
ձայն դիմում է ձեզ ձեր քահանան երբ ա-
մօթից քրտինքը պատած մի կերպով հաս-
նում էք վերջապէս դագաղի մօտ: Մեղաւոր
էք արդեօք դուք....

*) Սա չափազանցութիւն չէ:

Յաճախ են նաև պատահում դէպքեր,
երբ ժողովրդին բաժանուած մոմերը, կի-
սայրեալ դրութեամբ, հրաժարվում են տալ:
Քահանան պահանջում է ձեր միջոցով, իսկ
տէրը մերժում է: Ընկնում էք երկու կըրա-
կի մէջ. դէպի որ կողմը շրջում էք ձեր ե-
րեսը՝ այրվում է: Քահանայի պահանջն ար-
դեօք կատարէք, թէ մեռելատիրոջ իրաւուն-
քը յարգէք....

Աւելորդ չէ յիշել նաև այն անբաւա-
կանութիւնների և տրտունջների մասին, որ
հեղեղի պէս թափվում են ձեր գլխին յու-
ղարկաւորութեանը հրաւիրուած քահանա-
ների և շատ անգամ նոյն իսկ դպիրների
կողմից, երբ նրանց բաժանուած մոմերի
կեղծիքը բացվում է,—կիսայրեալ և ծայ-
րերը նորից շտկուած են լինում: Չէ՞ որ ա-
մենքին էլ յայտնի է, որ մոմավաճառանո-
ցում ծախուող մոմեղէնը կիսայրեալ լինել
չէ կարող: Հանելուկի ծայրը հետաքրքիրը
պիտի որոնէ ծխատէր քահանայի անձնական
մոմերի պահեստում. այնտեղ է կատարվում
այդ օպերացիան, մի հանգամանք, որ շատ
յաճախ կրկնվում է և հոգեհանգիստների և
կամ պսակների ժամանակ ծխերի կողմից
եկեղեցու ջահերի համար ուղարկուած մո-

մերի հետ, երբ մանաւանդ այդ մոմերը մինչեւ տեղ հասնելը անցնում են քահանայի ձեռքով... Մեղաւոր էք տրդեօք, որ կեղտոտ արարքների մասնակից չ՚լինելով հանդերձ՝ ձեր հաւցէին են ուղղում թէ նկատողութիւն, թէ վիրաւորանք....

Մինչդեռ քահանայ տաք սենեակում վառաւորապէս բաղմած թէյ է վայելում, դուք ձեզ իրաւունք չ՚պիտի համարէք նոյն սենեակում մի անկիւն նոյն իսկ բռնել, ուր մնաց թէ նստել աթոռի վրայ նրա ներկայութեամբ, այլ շուրջառն ու բուրվառը կռան տակ դրած՝ նախասենեակում և կամ դուրսը կանգնած պիտի սպասէք, մինչև որ պաշտօն կատարելու համար ձեզ բարեհաճեն ներս կանչել...

Ծանր ու վիրաւորական է այդ, մահու չափ մի նուաստացում... Ձեզ արհամարհում են, մարդատեղ չեն դցում։ Այդպէս են մեծ մասամբ վերաբերվում դէպի եկեղեցու սորին պաշտօնեան՝ իբրև մարդ՝ զերօի նշանակութիւն ստացած այդ անձնաւորութիւնը—տիրացուն։ Քահանան չի յարգում ձեր մարդկայինը և այդ հանգամանքը մի չափելի օրինակ է նոյն ժողովրդի համար։

Հանդուցեալին հողին յանձնելուց յետոյ

գերեզմանատնից դալիս էք մեռելատունը սեղանն օրհնելու։ Որքան և հոգով-սրտով հակառակ լինէք «քելեխ» ուտելուն, բայց և այնպէս դուք ստիպուած էք հետևել ձեր քահանային։ Պատահում է շատ անգամ, որ մինչդեռ դուք զբաղուած էք լինում ժամկոչի հետ սուրբ սեղանի շաքարը, գինին, մոմերը, «բուլկիները», խնձորը... տեղաւորելով, սենեակն արդէն լցվում է մեռելատիրոջ բարեկամներով և մանաւանդ պրոֆեսիոնալ քելեխակերների անկոչ բազմութեամբ։ Ասեղ գցելու տեղ չ՚կայ, ակամայից մնում էք դուրսը կանգնած և պիտի սպասէք մինչև սեղանի վերջանալը։ Իսկ եթէ բան է ձեր քահանան առհասարակ սիրում է մեռելաթասերը բազմապատկել, երկարացնել, այն ժամանակ վայը եկել տարել է ձեզ... Մի անգամ տիրացուի մէկին սեղանատանը տեղ չ՚լինելու պատճառով նստեցնում են մի սենեակում, որտեղ հաւաքուել էին բացառապէս աղքատներ, ձրիակերներ, գինեմոլներ, ֆիբգիրներ և փողոցային զանազան արհեստների տէր սրիկաներ։ Ճաշի ժամանակ գինու առատութիւնը ազդում է «հիւրերի» ուղղի վրայ։ Սեղանակիցներից երկուսն ինչ որ պատճառով կռվում աղմուկ են բարձրա-

ցընում, իսկ մէկն էլ (թող ներուի մեր անհամեստութիւնը) կանգնում և կեղտոտում է սենեակի մէջ... Սպասաւորները մեռելատիրող հրամանով ծեծում և դուրս են վռնդում անքաղաքավարի քելեխակերներին և ի թիւս այլոց մի քանի բռունցք էլ տիրացուին է բաժին հասնում այդ խառակութեան մէջ։ —Ահա մի դէպք, որ եկեղեցու ստորին սպասաւորի ողբալի կեանքի թշուառ պատկերներից մէկն է ներկայացնում։

Համանման դէպքերով ոչ պակաս է այդ կեանքը և՛ մկրտութիւններ, և՛ պսակներ կատարելու ժամանակ։ Ամեն մի քայլափոխում արհամարհանք, ծանր ակնարկներ և նկատողութիւններ իւր հասցէին, ստորացուցիչ նուաստացում—ահա թէ ինչ է նա շաբունակ տեսնում և լսում...

III.

Մենք համառօտապէս նկարագրեցինք ընթերցողին այն՝ ինչ որ վերաբերում է ժամանակակից տիրացուի, մասնաւորապէս Տըփխիսի, կեանքի, այսպէս ասած, բարոյական ճնշումներին, նրա պատուի և մարդկային թանկագին զգացմունքների նահատակութեանը, զրկանքներին։ Անցնենք այժմ նոյն

պայմանների նկատմամբ նրա նիւթականին։

Ինչպէս արդէն վերևը բացատրեցինք՝ մեր եկեղեցիներում արդիւնաբաշխութեան որոշ օրէնք, սիստեմ գոյութիւն չունի և իւրաքանչիւր մի քահանայ պատահած օրինակատարութիւնների արդիւնքից ցանկացածին չափ է միայն մաս հանում իւր տիրացուին։

Վերջինիս ապրուստի աղբիւրները կազմում են՝ նախ ռոճիկը և յետոյ էլ դանձանակը և օրինակատարութիւններից ստացած հասոյթները։ Այժմ տեսնենք, թէ իւրաքանչիւրը դոցանից ինչ չափով է ապահովում տիրացուի ապրուստի միջոցները, ընդունելով նրան իբրև մի մարդ, որ կարող է սահմանափակուել կեանքի ամենահամեստ պահանջներով։

Տփխիսում կան եկեղեցիներ, որտեղ սպասաւորները բոլորովին ռոճիկ չեն ստանում և միայն օրինակատարութիւններից և դանձանակից են սպասում իրենց ապրուստը։ Եթէ վերցնելու լինենք միջին թիւը, կտեսնենք, որ այդ ռոճիկ ասուած ապրուստի աղբիւրը որևէ 5 ր. ողորմելի դումարի սահմանից այն կողմը չի անցնում։ Միւս կողմից ի նկատի առնելով օրինակատարութիւնների պատահական բնաւորութիւնը, դրժ

ւար չէ երևակայել, թէ մի տիրացու, որ իբրև մարդ՝ բնականաբար մարդավայել ապրելու իրաւունք ունի, շատ անգամ ծանրաբեռնուած լինելով բազմանդամ ընտանիքով, դժոխային որպիսի վիճակի մէջ է ընկնում, երբ հարկադրուած է լինում բաւականանալ ամբողջ 30 օր այդ չնչին դումարով միայն և նրանով հոգալ իւր տան վարձը, հոգալ իւր մարդաշատ ընտանիքի և՛ հացը, և՛ ջուրը, և՛ վառելիքը, և՛ լուսաւորութիւնը, և այլն և այլն։ Եթէ այդ ռոճկի վրայ աւելացնելու լինենք նոյնիսկ մի ամսուայ ընթացքում հաւաքուած դանձանակը, արդիւնքի սառուցման կէտը, համարձակ կարելի է ասել, ռոճկի հետ միասին հազիւ թէ հասնելու լինի 8—9 ր., որովհետև Տփխիսի ամենահարուստ եկեղեցիներում միայն սպասաւորներից իւրաքանչիւրը մաքսիմում 3—4 ր. դանձանակ է վերցնում ամսական։

Այս թուերը պերճախօս կերպով ցոյց են տալիս, որ տիրացուի ստացած ռոճիկն ու դանձանակը միասին անբաւարար են միանգամայն նրա ապրուստի համար և կաղմում են մի թիւ, որ նոյն իսկ օրավարձ հասարակ բանուորի ամսականի համեմատութեամբ փոքրէ։

Գալով օրինակատարութիւններին, մենք ա՛զէն ասացինք, որ նրանք պատահական բնաւորութիւն են կրում։ Շատ անգամ շաբաթներ, ամիս է անցնում և սպասաւորը օրինակատարութեան երես չի տեսնում։ Անկարելի է այստեղ ուշադրութեան չառնել մի աչքի ընկնող հանգամանք, որ ունի իւր մեծ նշանակութիւնը տիրացուի արդիւնքների աշխարհում։—Դա ծխաբաժանութեան սիստեմի բացակայութիւնն է, որ ներկայումս շատ միջավայրերի շարքում գոյութիւն ունի նաև Տփխիսում։ Մեր խնդրից բոլորովին դուրս է, թէ որպիսի պայմանների հետևանք է դա. մեզ համար կարեւոր է միայն այն հանգամանքը, թէ եկամտի տեսակէտից որքան նշանակութիւն ունի նա սպասաւորի համար։ Հարուստ են քահանայի ծխերը, նրա եկամտի հետ միասին, բնականաբար, մեծէ և սպասաւորի եկամուտը, և ընդհակառակը, աղքատ են քահանայի ծխերը, նրա եկամտի հետ միասին քիչ է և սպասաւորի եկամուտը։ Ծխերի շատութիւնը նշանակութիւն չունի, եթէ նրանք ընդհանրապէս աղքատ և անապահով են։ Փակագծի մէջ ասենք, որ մենք ի նկատի

չենք առնում հարուստ ժլատների կատեգորիան...

Պատահած օրինակատարութիւնը վերջացընելուց յետոյ, երբ դա մեռելաթաղ է, հոգեհանգիստ և շատ անգամ նոյն իսկ պսակ՝ ծխատէր քահանան մանրամասն հաշիւ է կազմում և յանձնում տիրոջը։ Այդ հաշուի բովանդակութեան մասին նրա տիրացուն այնքան գաղափար է միայն ունենում, որքան Աֆրիկայի մերկանդամ օթենթօթը Փարիզի վերջին մոդաների մասին։ Շատ հազիւ է պատահում, երբ տեղն ու տեղը վճարւում է այդ հաշիւը։ Տփխիսում ընդունված մի սովորութիւն է, միշտ ձգձգել, ուշացնել նման հաշիւները և այն՝ շատ անգամ մի քանի ամիսներով, նոյն իսկ տարով։ Ծիծաղելի չէ՞ տեսնել մի նորապսակ զոյգ, որը արդէն բոլորել է իւր ամուսնութեան միամեայ շրջանը, ունեցել է մինչև իսկ իւր անդրանիկ պտուղը, այն ինչ նրա պսակի վարձը դեռ ոչ եկեղեցին, ոչ քահանան և ո՛չ էլ սպասաւորն է ստացել... Տարօրինակ չէ՞ տեսնել, երբ հանգուցեալը թաղում, հողին է յանձնվում, կատարվում է արդէն նրա քառասունքը, տարելիցը, այն ինչ ոչ եկեղեցուն և ոչ էլ նրա պաշտօնեաներին հարկաւոր վարձա-

տրութիւնը դեռ չի տրուել... Այո՛, այս երեւոյթը մոդա է Տփխիսում և սպասաւորներից շատերի մօտ կարելի է գտնել երկար ցուցակներ, որտեղ անուն-անուն գրուած է լինում ծխերից այս կամ այն օրինակատարութեան համար իրենց ստանալիք ապառիկները։ Հաշիւն ստանալուց յետոյ ծխատէր քահանան սկսում է բաժանել օրինակատարութեանը մասնակցողներին նրանց յատկացրուած մասը և, ի հարկէ, նրա տիրացուն էլ իւր բաժինն է ստանում։ Տփխիսում հինգ մասերի վրայ կարելի է հաշուել այն քահանաներին, որոնք բարեխիղճ վարձատրութիւն են ստանում ծխերից իրենց տիրացուի համար և ստացածն էլ աղնուաբար յանձնում նրան ամբողջութեամբ։ Իրականութիւնը, սակայն, անհերքելի փաստերով ցոյց է տալիս, որ սպասաւորի մասը—նրա անունով ստացուածը ամենաանխիղճ կերպով նախ և առաջ խուզւում, կրճատվում, պոչից ու գլխից կտրվում է իւր քահանայի ձեռքով և յետոյ միայն անդամահատուած դրութեամբ տրւում նրան։ Հակառակ դէպքում քահանան ուրիշ կերպ է յագուրդ տալիս իւր ագահութեանը։—Հաշուի մէջ սպասաւորի մասը ստանալով մինիմումի ամենակրճատ սահ-

մաններում, նոյն ձևով շօշափելով նաև ծախսերի միւս կէտերը, միւս կողմից իրեն միայն յատուկ վարպետութեամբ աւելացնում է իւր վարձատրութեան չափը։ Այդտեղ արդէն նա մոռանում է մինչև իսկ սահմանի դաղափարը... Հարիւրից մի ծուխ միայն կարող է պատահել, որ սպասաւորի դրութեան մէջ մտնելով, հակառակ քահանայի ցանկութեան, աւել է նշանակում նրա համար։

Գուցէ դուք, յարգելի ընթերցող, ապացոյցներ էք պահանջում։ Մի՞թէ այն, ինչ որ ամեն մի քայլափոխում տեղի է ունենում, ինչ որ, կարծես, մի տարօրինակ հասկացողութեամբ, քաղաքացիական օրէնքի բոլոր արտօնութիւններն է վայելում—կարօտ կարող է լինել ապացոյցների։

Մենք դիտենք մի քահանայ, որ հինգ պսակից մի ռուբլի միայն տուեց իւր տիրացուին, այն ինչ ինքը այդ պսակներից, երեւի, ամենաքիչը 40—50 ր. էր ստացել։

Դիտենք մի քահանայ, որի տիրացուն մի պսակից դէպքի յաջող բերմամբ 7 ր. էր ստացել — մինչև այդ օրինակատարութիւնից միանուագ ստացած նրա համար մի աներևակայելի գումար—իսկ իւր քահանան՝ 50 ր.։ Միւս օրը թշուառը հետևեալ ար-

հաւիրքին է ենթարկվում. «Ի՞նչ իրաւունքով ես դու X-ից 7 ր. ստանում, քանի որ նա իրաւունք չունի իմ փողից քեզ վարձատրութիւն տալու և դու էլ իմ տիրացուն լինելով, ուրիշ քահանայից վարձատրութիւն ընդունելու իրաւունք չ՛ունես։ Քեզ երկու ր. է միայն հասնում. մնացած հինգ ր. առանց խօսելու հանիր և տուր ինձ» — դիմում է նրան իւր քահանան բարկացած ու փրփրած։ Ի՞նչ կասկած, որ պահանջն իսկոյն և եթ կատարվում է։

Դիտենք մի քահանայ՝ կրթուած ու ուրոշ շրջանում շատ յարգուած մի հոգևորական *, որ մի պսակից ստացած 50 ր. գումարից 50 կ. միայն մաս հանեց իւր տիրացուին։

Դիտենք մի քահանայ, որ մի հարուստ մեռելաթաղից իւր տիրացուի համար ստացած 100 ռուբլուց 50 ր. միայն տուեց նրան —ճիշտ և ճիշտ քրդի նման կիսեց։ Իսկ դիտէք՝ թէ ինքը որքան ստացաւ—հաւաստի աղբիւրների համաձայն մի քանի հազարներ։

Դիտենք մի քահանայ, որ մի յայտնի հարուստի թաղումից 1000-ից աւել ստա-

*) Այժմ փոխադրուած Ռուսաստանի գլխաւոր քաղաքներից մէկը։

նալով հանդերձ, չ՛զլացաւ իւր տիրացուի համար նշանակած 50 բուբլուց 10 ր. միայն տալ նրան։

Գիտենք մի քահանայ, որ մի Վեռելաթաղի մասնակցելու համար՝ երբ 10 ր. բերելով յայտնեցին նրան, որ այդ գումարից 2 ր. իւր տիրացուին է յատկացրուած իբրև «շուրջառականի» վարձ, բարկացած բացականչեց. «Ի՞նչ խաբար է, ես քահանայ տեղովս 8 ր. ստանամ, իսկ տիրացուս 2 ր....» Այս ասելով, հանեց դրպանից մի բուբլի և տուեց վերջինին։

Գիտենք մի քահանայ, որ երբ մի հարուստի յիշատակին կատարուած հոգեհանգստի համար շատ չնչին վարձատրութիւն էր տալիս սպասաւորներին, նրանցից մի քանիսը անբաւականութիւն յայտնեցին։ «Գայլի բերանը ոսկր ընկնի և նա բաց թողնի»— եղաւ նրա բառացի պատասխանը այդ բողոքի դէմ...

Գիտենք մի քահանայ, որ օրինակատարութիւններից իւր տիրացուին հասնելիքը ամիսներով շարունակ պահելու և կռիւ ու զալմաղալով միայն տալու հիւանդութիւն ունի։ «Կ՛ուտամ, եղբայր, կ՛ուտամ...»—այդ է լինում միշտ նրա միօրինակ պատասխանը,

երբ տիրացուն յիշեցնում է նրան ապառիկների մասին։ Եւ մի չ՛տեսնուած հայկաբանութեամբ այդ «կ՛ուտամը» միշտ «կուտեմ» հարկաւոր է հասկանալ, որովհետև, արդարև որ, անհետ կլանվում կորչում է միշտ....

Սակայն արդարութիւնը պահանջում է միակողմանի չ՛լինել։—

Մենք գիտենք մի քահանայ, որ տնօրհնէքի ժամանակ, շատերի նման, չի «մոռանում» իւր աղքատ և հացի կարօտ ծրխերին և կանոնաւոր կերպով ամեն անգամ տները օրհնելուց զատ մինչև անգամ իւր հաւաքածից առատ բաժին էլ է հանում չքաւոր տանտէրին։

Գիտենք մի քահանայ, որ իւր դժուած ու ժլատ պաշտօնակից ընկերներին օրինակ տալու համար, երբ նրանց ներկայութեամբ միշտ առատ մաս է տալիս իւր տիրացուին այն արդիւնքներից, որ միւս քահանաները առհասարակ գիտեն ամբողջապէս իրենց դրպանը դնել, դատափետվում է իւր այդ ընկերներից, որպէս թէ ի ցոյց մարդկան տալիս է, իսկ դուրսը կրկին յետ վերցնում....— արդարանալու մի աններելի և ստոր միջոց։

Բայց որքա՞ն հաղուագիւտ են դժբախտաբար այսպիսի օրինակները։

Փորձի համար դիմեցէք առաջին պատահած տիրացուին՝ և նա անլուր զրկանքների պատմութիւնների մի երկար շարք կարող է հաղորդել ձեզ։ Նա շատ լաւ գիտէ, որ քահանան այն չի տալիս իրան, ինչ որ իւր անունով ստացվում է, համոզուած է, որ ինքը հարստահարվում է, բայց այն էլ գիտէ, որ եթէ ստուգելու համար ծխի տունը մտնելու յանդգնութիւն ունենայ, եկեղեցուց անպատճառ կարտաքսուի իւր այդ քայլի համար։ Ճիշտ է, քահանայի կեղտոտութիւնը կ՚բացուի այդ դէպքում, բայց դա շատ քիչ կ՚լինի նրա սպասաւորի կրած հարուածը բուժելու, ամոքելու համար։ Միւս կողմից էլ տէր հօրը շատ լաւ յայտնի է տիրացուի հոգեբանութիւնը, գիտէ նրա թոյլ կողմերը, և հանդիստ, ամենայն ապահովութեամբ շարունակում է իւր քստմնելի և անսիրտ օպերացիան....

Ժողովրդին ընդհանրապէս անյայտ է քահանայական դասի սպասաւորին կողոպտելու այդ հրէշաւոր վարմունքը, նրան բոլորովին չէ հետաքրքրում այն հարցը, թէ սպասաւորին տրուած մասը արդեօք ամբողջութեամբ հասնո՞ւմ է նրա ձեռքը, թէ ո՞չ։ Նա հաւատում է իւր ծխատէր քահանային

և նրանից, որպէս Քրիստոսի աշակերտից, որպէս Աստուծոյ սրբազնագործ պաշտօնեայից բոլորովին չէ սպասում նման մի վարմունք։ Իսկ թէ այդ պաշտօնեան որքան ազնուութեամբ է վերաբերվում դէպի այդ հաւատը—դրա մասին արդէն պարբերաբար շարունակ կրկնվող փաստերն են խօսում։ Ես շատ եկեղեցական ստորին սպասաւորներից եմ անձամբ լսել, թէ որքա՞ն շնորհակալ կը՚լինէին իրանք, եթէ այն բուբլիները, որ ժողովուրդը քահանայի ձեռքով է տալիս իրանց, այդ բուբլիների փոխարէն կոպէկներ ստանային, բայց միայն ոչ թէ քահանայի, այլ անմիջապէս նոյն ժողովրդի ձեռքից։ «Մենք ժողովրդից դժգոհ լինելու բնաւ իրաւունք չ՚ունենք, նա առհասարակ գիտէ լաւ վարձատրել, բայց ցաւը նրա մէջն է, որ մենք այդ վարձատրութեան յօշոտուած կվախքը միայն ստանալով հանդերձ, ժողովուրդը, դժբախտաբար, այն հաստատ կարծիքին և համոզմունքին է մնում, որ իւր տուածը տեղ է հասնում։ Եւ երբ մենք զրկուածին, հարբստահարուածին յատուկ խղճալի պատկերի ամբողջ արտաքինով հանդամանքների բերմամբ մտնում ենք նրա տան դռնով, նա անընպատ, թեր և դէմ կարծիքներ է կազմում

մեր մասին. և իրաւունք ունի։ Մեր արհամարհուած լինելու բուն պատճառներից մէկն էլ այդ է»....

Ռոճկի և գանձանակի սահմաններն արդէն մենք որոշեցինք վերևը։ Գալով օրինակատարութիւններին և այս դէպքում էս կրկին առաջնորդուելով միջին թիւը վերցնելու սիստեմով, մենք տեսնում ենք, որ եկեղեց. սպասաւորի արդիւնքի այդ աղբիւրը էս մի աննշան թիւ է ներկայացնում՝ մօտաւորական հաշուով ոչ աւել քան 8—10 ր. (թէ իւր քահանայի ծխերից և թէ կողմնակի օրինակատարութիւնների հրաւիրուելուց)։

Այսպէս ուրեմն, մեր ստացած թուերը պարզ ցոյց են տալիս, որ Տփխիսի իւրաքանչիւր մի եկեղեց. ստորին սպասաւորի ամսական բիւջէն օրինակատարութիւններից, գանձանակից ստացած արդիւնքի և ռոճկի հետ միասին կազմում է 16—19 ր.։ Անաչառ լինելու և կողմնապահութիւնից հեռու մնալու համար այդ գումարի վրայ պիտի աւելացնել նաև դառն արիւն-քրտինքով ձեռք բերած այն մի քանի կոպէկները, որ նա ստանում է «տիրացուական երդեցիկ խմբից», թէ ամառում՝ անտանելի տօթերի

և թէ ձմեռային խստաշունչ բուք ու բորանի ժամանակ դէպի հեռաւոր Վէրայի և կամ Խօջիվանքի գերեզմանատունը երգելով առաջնորդելով ննջեցեալներին, երբ մինչև տեղ հասնելը յուղարկաւորութեանը մասնակցելու հրաւիրուած շատ անգամ 10—15 քահանայից ծխատիրոջ հետ ընդ ամենը մի ջուխտ ու մի կենտ պարտաճանաչ ու բարեխիղճներն են միայն մնում։ Եթէ խմբից ստացածն էլ առ առաւելն ամսական 5—6 ր. ընդունելու լինենք, որ հազիւ թէ լինի, կ'ստանանք վերոյիշեալի հետ միասին 21—25 ր.։

Այդ գումարը կարող է ապրուստի բաւականութիւն տալ սպասաւորին, եթէ նա դեռ ամուրի է, եթէ նրա վրայ չկայ ընտանիք պահելու դժուարին լուծն ու պատասխանատուութիւնը։ Բայց բանն այն է, որ այդ դասակարգի 75% համարեա ամուսնացած մարդիկ են կազմում, ծանրաբեռնուած ընտանիքով ու զաւակներով։ Քսան և հինգ ռուբլին նրա ամսական արդիւնքի maximum թիւն է. դրա վրայ ամենայն համարձակութեամբ կարելի է պնդել։ Որչափ և նա աշխատէ իւր ապրուստի ամենաանհրաժեշտ պահանջների չափերն անդամ սահմանափա-

կելու, ապրելու ճնշուած դրութեամբ, անհնարին է այնու ամենայնիւ երևակայել, որ անակնկալ դէպքերից առաջ եկած ծախսերը աւելիչ ազդեցութիւն չ'ունենան նրա ողորմելի բիւջէի վրայ և նա ստիպուած չլինի քաղցած չ'մնալու համար այս ու այն կողմն ընկնել, սրանից նրանից փոխառութիւն խնդրել։ Իսկ երբ դէպքը նրան է հիւանդութեան մահիճը նետում, հեշտ է արդէն պատկերացնել, թէ այնուհետև ինչ կ'լինի նրա ընտանիքի դրութիւնը։ Զաւակների կրթութեան մասին աւելորդ է մինչև անգամ մրտածել, քանի որ մեզանում ժամանակը չինական պարիսպներով է շրջապատել դիտութիւնը, ուսումը։ Աղքատը, չքաւորը միշտ հեռու պիտի մնայ կրթական հաստատութիւններից....

Արդիւնքների աղբիւրները թուելու ժամանակ մենք չ'յիշեցինք այն՝ ինչ որ ստացւում է զատկի և ծննդեան տնօրհնէքներից և տարուայ մէջ մի քանի անգամ կրկնվող դերեզմանօրհնէքներից։

Եթէ եկեղեցական ստորին սպասաւորի ձեռքը երբ և իցէ միանուագ կերպով մի քանի տասնեակ բուբլիների դումար է ընկնում, այդ վերև յիշուած տօների ժամանակ

է միայն լինում։ Մնացած դէպքերում նրա ամբողջ արդիւնքը ստացւում է կոպէկներով, մի հանդամանք՝ որ սաստիկ դժուարացնում է նրա առօրեայ ապրուստի պայմանները, երբ ստացածը, ինչպէս ասում են՝ «բանի տեղ չէ անցնում, դարդին դարման չի լինում»։ Եւ նա ամեն անգամ անհամբեր սպասում է, թէ երբ կ'հասնի տնօրհնէքը, որ կարողանայ գոնէ իւր և իւր ընտանիքի, զաւակների «ոտ ու գլխին նայել»—հագուստի մասին ևս մտածել։ Զէ՞ որ շորն էլ մի կենսական անհրաժեշտութիւն է, ամենակարեւոր մի պահանջ մարդու համար։ Շռայլութիւն արդեօք պիտի համարել այն, եթէ միլիոնաւոր ծնողների շարքում այդ մարդն էլ ցանկանայ տեսնել իւր երեխաներին մաքուր նոր շորեր հագած...

Տնօրհնէքը, մանաւանդ ծննդեան տնօրհնէքը այն միակ փրկարար օժանդակութիւնն է, որ ձմեռային խստաշունչ օրերին գալիս է փոքր ի շատէ գոյն տալու նրա տօնական աղքատիկ սեղանին և մանաւանդ սառնամանիքից ազատելու նրա ընտանիքը։ Մենք դիտենք տիրացուներ, որոնց մանրիկ երեխաները մինչև այդ ցանկալի տօնի հասնելը, եղել են դէպքեր, երբ վերմակների մէջ են

փաթաթուած անցկացրել ամբողջ օրեր ու շաբաթներ։ Հասել է տնօրէնէքը և նրանց խղճուկ ու անշուք բնակարանը վերջի վերջոյ կրակի ջերմութիւն է զգացել, վառարանը, վերջապէս, փայտի երես է տեսել...

Անմտութիւն է միանգամայն սպասել, որ քահանան այդպիսի նեղ բոպէներում նիւթապէս օգնութեան հասնէ իւր տիրացուին, մի բոպէ մտածէ ամոքել նրա ընտանեկան աննախանձելի և թշուառ կացութիւնը։ Եթէ այդ մարդը հանգիստ խղճով զրկում է իւր այդ ստորադրեալին, ամեն քայլափոխում աշխատում կրճատել նրա վարձատրութիւնը և ստացածն էլ ամիսներով, շաբաթներով շատ անգամ պահելուց յետոյ միայն տալիս նրան—անկարելի է այդ բոլորը տեսնելուց յետոյ որոնել նրա մէջ այն՝ ինչ որ կոչւում է գութ, մարդասիրութիւն, կարեկցութիւն։ Կայ մի այլ աւետարան նրա համար, որ կատարեալ հակակշիռն է կազմում այն սրբազան գրքին, որի վեհ սկզբունքների քարոզիչն ու տարածողն է նա կոչուած լինելու...

Հարց է. արդեօք այդ բոլոր կարիքներին կարող է բաւականութիւն տալ տնօրէնէքներից և դերեզմանօրէնէքներից ստացած եկամուտը։—Դ Խուարանումենք հաւատալ։

Մի քանի խօսք էլ շատ կազմելու մասին։

Որև է եկեղեցու վրայ շատ կազմել, այդ նշանակում է նոյն եկեղեցու ապագայ քահանան լինել, հովուել նրա ծխերի մի որոշ մասը՝ ձեռնադրուելով այս կամ այն վախճանուած միաբանի փոխարէն և կամ «օգնական» կոչմամբ իբրև պաշտօնակատար այն միաբանի, որ ծերութեան կամ տկարութեան պատճառով անկարող է լինում վարել իւր հոգևոր պարտականութիւնները։ Եթէ ներկայումս դպրոցաւարտ և հարկաւոր պատրաստականութիւնն ունեցող անհատի համար տիրացուական ողորմելի պաշտօնը մինչև անգամ ձեռք բերելը այնքան դժուարութիւնների հետ է կապուած, հեշտ է երևակայել, թէ որպիսի արգելքների և խոչընդոտների դէմ հարկաւոր է մաքառել շատ կազմելու համար։ Դորա համար անհրաժեշտ է ձեռք բերել նոյն եկեղեցու ծխականների համաձայնութիւնը. բայց նախ քան այդ՝ կարեւոր է ստանալ նորա հոգևոր միաբանութեան հաճութիւնը։ Եւ որովհետև այդ վերջինի հաճութիւնը առանց յայտնի կոմբինացիաների անկարելի է երևակայել, այդ պատճառով և միամտութիւն կ՚լինի որ և է

յաջող ելք սպասել։ Նա, որ քահանայացել է, չենք կարծում, թէ իւր գործի ընթացքում անբախտութիւն ունեցած չ՛լինի ընդհարուել նման կոմբինացիաների հետ և այն էլ՝ անշուշտ մի քանի անգամ.... Այդ կոմբինացիաների էութիւնը ընթերցողին բացատրելու համար առաջ կ՛բերենք կատարուած բազմաթիւ իրական փաստերից մէկը։—Քաղաքիս քահանաներից մէկին դիմում է մի պարոն՝ տեղեկանալու, թէ ինչ պայմաններով ցանկացողը կարող է յոյս ունենալ ձեռնադրուել նրա ծխերի վրայ։ Տէր այրը առանց երկար ու բարակ մտածելուր պահանջում է դրա համար երկու հազար ր. կանխիկ դրամ գործի հէնց սկզբում և այնուհետև էլ մինչև իւր մահը յիսնական ր. ամսական։ Սակարկութիւնը սակայն ոչ մի հետևանքի չի հասցնում և արժանապ. հոգեւորականը ոչ մի կերպով չի համաձայնում իւր ասածից կոպէկ անգամ զիջել, աւելացնելով հանդերձ, որ այդ գինը իրան արդէն տուողներ շատ կան։ Պարոնի հարցին՝ թէ գուցէ մինչև նրա մեռնելը ոչ մի առնող չ՛կարողանայ միանուագ այդ գումարը վճարել և այնպէս էլ նա զրկուած մնայ իւր օգուտից։ «Սա ընդունված սովորութիւն է մեզանում և ես բոլորովին չեմ կարծում, թէ երբ և իցէ իմ տեղս առնող չ՛լինի և մեռնելուցս յետոյ թափուր մնայ....»,—պատասխանում է տէր հայրը։

Ահա թէ որպիսի հրէշաւոր կարգեր են ծնունդ առել մեր քահանայական դասի մէջ, կարգեր, որ զզուանք միայն կարող էին պատճառել այն ազնիւ ու պատուասէր անհատներին, որոնք եթէ մի օր գաղափարից դրդուած ցանկանային մտնել հոգևոր պաշտօնի մէջ։

Դա մի խայտառակ առևտուր է, որ շարունակ հեռու է պահել մայրենի եկեղեցին դիտակից ու պարտաճանաչ տարրերից և միւս կողմից զանազան սինլքորների և ապիրատ մարդկանց համար ուղի հարթել դէպի այդ սրբազան հաստատութիւնը։ Եւ բաւական չէ, որ այդ պարազիտները ժողովրդին ոչինչ չ՛տալով հանդերձ, ապրում են նրա հաշուով՝ ապաւինած իրենց ակնածելի կոչմանը, դեռ իրաւունք էլ են համարում անկարութեան շրջանը մտնելուց առաջ կենսաթոշակներ ապահովել իրենց համար, յաջորդներ ընտրել և հրաւիրել և այն էլ՝ հարիւրների, հազարների գնով։ Մենք դեռ չենք

խօսում նրանց ծիծաղաշարժ յօբելեանների մասին...

Ցայտնի են արդեօք մեր հոգևոր իշխանութեանը այս մութ առեղծուածները, այս անդոսնելի առևտուրը։ Արդեօք նրա համար ևս վարագուրված են իւր ստորադրեալների այս նողկալի արարքները, որպէս հասարակութեան համար, որ մի դատապարտելի անտարբերութեամբ դրիչ է վերցնում և նրանց համախօսական թերթերի մէջ ստորագրութեամբ հաստատում իւր համաձայնութիւնը։ Ի՞նչ անուն արդեօք հարկաւոր է տալ այն հանգամանքին, երբ իշխանութիւն և ժողովրդի ազատ ընտրողական սկզբունք գոյութիւն ունենալով հանդերձ, եկեղեցու սրբազան պաշտօնէութիւնը իրապէս վաճառքի է հանւում, մի անպատիւ սակարկութեան առարկայ է դառնում....

Դեռ Ե. դարում մեր խորնեցի ծերունազարդ քերթողահայրը իւր անմեռ ոգի մէջ գրում էր. «Վարդապետք տխմարք և ընդ ինքնահաճք, անձամբ առեալ պատիւ և ոչ յԱստուծոյ կոչեցեալ, արծաթով ընտրեալք և ոչ հոգւով, ոսկեսէրք, նախաձոռք, թողեալ զհեզութիւն, յորում Աստուած ընակէ, և գայլք եղեալ՝ զիւրեանց հօտս գիշատելով»։

«Կրօնաւորք կեղծաւորք, անձնացոյցք, սնափառք, պատուասէրք քան թէ աստուածասէրք»։

«...Ժողովրդականք վէսք... մեծախօսք, անվաստակք, այրեցոյք, վնասակարք, փախչողք ի ժառանգութենէ....»

Դա նրա ժամանակակից հայ աշխարհի ճշմարտապատում նկարագիրն էր, նրա հարազատ և անաղարտ պատկերը։ Տասնուհինգ երկար ու ձիգ դարեր են գլորուել այդ օրից, սերունդների մի անծայր շղթայ է եկել ու անցել՝ և դեռ այդ պատկերը մեզ համար պահպանել է իւր թարմութիւնը, իւր անփոփոխ դրութիւնը։ Հաղար հինգ հարիւր տարուայ կեանքի ալիքները անզօր են գըտնուել իրենց յեղափոխիչ ուժով ազդել նրա վրայ....

IV.

Բարոյապէս ճնշուած և նիւթականապէս զրկուած ու հարստահարուած—ահա հայ եկեղեցու ստորին պաշտօնեաների ընդհանուր դրութիւնը։ Մի ամբողջ դասակարգ մատնուած է ժողովրդի արհամարհանքին, մատնուած հոգևոր իշխանութեան անօրինակ

անտարբերութեանը։ Բայց այդ դասակարգը մի բով է, որ ոչքան էլ փորձելու լինենք հերքել, ջրել նրա նշանակութիւնը՝ այնու ամենայնիւ նա իւր որոշ և, եթէ չենք սխալւում, նոյն իսկ ազդեցիկ դերն ունի մեր հասարակական կեանքի մէջ։—Այդ բովի մէջ է մեծանում, նրա նուիրագործուած տրադիցիաներով զարգանում մի սերունդ, որ հայ ժողովրդին տալիս է հոգևոր հովիւներ —քահանաներ։ Բովի որպիսութեան հետ, բնականաբար, պայմանաւորուած է լինում և՛ ժողովրդի այդ անմիջական հոգևոր ուսուցիչների—առաջնորդների ամբողջ աշխարհահայեացքը, նրանց հասկացողութիւնները, մտաւոր-բարոյական մակերևոյթը և այլն.... Այդ, սպասաւորական մարմնի ներկայ կազմը, նրա կեանքը, դրութիւնը, շրջապատող պայմանները ի նկատի ունենալով՝ դժուար չէ եզրակացնել, թէ որքան կարող են այդ բովի միջից ելած հոգևոր առաջնորդները արդարացնել ժողովրդի յոյսերը, բաւականութիւն տալ նրա գիտակից տարրերի պահանջներին.... մանաւանդ ներկայ պատմական ծանր ժամանակաշրջանում։

Անհրաժեշտ է մաքրել այդ կազմը, բարձրացնել նրա մտաւոր—բարոյական վիճակը

և այնու հանդերձ մտածել նրա տնտեսական անմխիթար դրութեան մասին։ Եւ եթէ մեր հոգևոր բարձրագոյն իշխանութեան համար թանկ են հայ ժողովրդի շահերը, թանկ հայ եկեղեցու նշանակութիւնը՝ դոնէ այժմ նա պիտի սթափուի իւր աղէտաբեր քնից և օր առաջ հոգ տանէ բաւարարութիւն տալ այդ անյետաձգելի կարիքներին։

Ժամանակն անգին է և, որ գլխաւորն է, նա սպասել չգիտէ։

ՎԵՐՋ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՍՍՌ Ակադ.ՍՍՌ
Գ. Մ. Ա. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՁԵՌԱԳՐԱՏՈՒՆ

«Ազգային գրադարան»
NL0156875

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.